57. ՆՌԱՆ ԽԱՏԵՆ

Կէլնի, կէլնի, կէլնի, չէլնի, կէլնի, կէլնի մեյ թագավոր: Էսա թագավորն ի, խորե մորե ունի մեյ խատ սիրուն լաճ. ըսկուն խորոտ, աննման տղա դայմա տեղ գտնվի լաճերաց մեջ:

Թագավորը խաբար կանի Հնդու թագավուրուն, որ ինոր աղջիկը բերի ուր լաճուն, էն աղջիկն էլ խորն ու մոր մեյ խատ էր: Խարսնավորները կիազրվեն, շատ մարդով, թարթախմով կէրթան Հնդստան խարսխուր, կբերեն էն աղջիկ:

Որ կխասնեն վեր կես ճամբխին՝ փեսենը ուր ծիու վերվիս կիրիշկի տակ, գեյտնի վերա կտիսնա մեկ խատ կարմրոշիկ կլոր բան մը. էն թնխմին կանի, թե ջավահիր ակ էլնի, ծիուց տակ կէջնի, ծեռ որ կառնի՝ կիմնա որ նռան խատ ի կնդածն. էլ մարդու բան չասի, համան կթալի բերան, կէլնի ծին կիւեծնի: Խարսն որ կտիսնա՝ ինատ կանի, կասի. «Էլ չեմ ուզե էսա փեսեն, ի՛նչ նավսատ ի, ծիկ դարձուցեք իմ խերանց տուն»: Հայ-հավար հայ-մատաթ, ինչ որ կասեն՝ էլ ճար իլաճ չէլնե. կէրթամ որ կէրթամ, չեմ առնե որ չեմ առնե էսա փեսեն: Ախր վերջ՝ խարս կդառցուցեն ուր խերանց տուն:

Թագավուրու լաճն էլ ինատ կմտնի, կտրտմի. գլոխ կախ կէրթա: Ուր խեստի մարդերն էլ շատ թըշվըշ կանեն, կէրթան թագավուրուն իմաց կանեն՝ ինչ որ ճամխի վերեն տեսան: Փեսեն էլ չի դառնա խոր տուն, կինի դես դեն, կֆռա, կֆռա, կէրթա։ էն աղջկա խոր տուն կկնդնի, կըլըղ կտոխի կմտնի ինոնց տուն, կէլնի մշակ:

Մարդ չիմնա էսա բան, չյում աղջիկն էլ չճանչնա որ էտա մշակը ուր իրիկն ի: Թագավուրու աղջիկը խեստ մշակուն խոսքներ մեկ կանեն, իրարու կսիրեն, իրար կառնեն, կմեյտեղվեն: Մշակն ի, օրմ կմտնի աղջկա խելք, գիշրով կփախնեն, կէրթան: Կէրթան կէրթան, ռաստ կուգյան մեկ բանձրիկ սարիմ կմտնեն հ'էրիմ մեջ: Լաճ կասի. «Տյու ըստեղ կաց, ես էրթամ մեյ լավ տեղ գտնեմ, ապա գյամ քե էլ առնեմ, տանեմ էնտեղ ապրենք»:

Աղջիկը մեն-մենակ կմնա էտա հ'էրի մեջ, կուլա, կուլա, չյում արտսունք կէլնի ուր կթրճի: Դեն կիրիշկի, դես կիրիշկի, մարդ, ադամորդի գյայող էրթայող չկա. կմնա մեջ ուր հուլ-վիճակին: Շատ կտրտմի, շատ կբախտակոծվի վեր ուր հալին: Մայար մասե, որ թագավուրու լաճ գնայե, ուր կըլըղ փոխե, մշակու խալվներ հանե, խագե լավ-լավ շորեր, սիլախներ կապե վերեն, խեծե ուր ձին, իկեր ի որ աղջիկն առնի տանի: Կմտնի հ'էր. կխառնուցի. - Ա՜յ աղջիկ, ինչի՞ ես մեն-մենակ մնայե էսա տեղ. արե քե տանես մեր տուն, անտեր-անտիրական մի մընա:

- Չէ՛, աղա, չէ. ես կմնամ էսա տեղ, իմ մարդ գնայե, որ մե խամար լավ տեղ ճարի, գյա ձիկ տանի էնտեղ, տնավորվենք:

- Որ ըսկուն ի, - կասի թագավուրու լաճ, - ես կէրթամ, որ քյո իրիկ կուգյա՝ ասա թող գյա մեր տուն էլնի մշակ. ես քե էլ, ինոր էլ մեկ տեղ կպախեմ չյում օրն մախուն:

Թագավուրու լաճ կդառնա ուր տուն, մշակու խալըվներ էլմ կխայնի, կուգյա հ'էր, մոտ ուր կնիկ, կտիսնա լալու մեջ: Կնիկն ի կասի. - Ձո մարդ, էսա երկրի թագավուրու լաճն էկավ էսա տեղ, կասեր. «Խեստ քյո մարդուն էկեյք մեր տուն, ես էրկսիդ էլ կկախեմ չյում օրն մախուն»:

Կասի. - Որ էտասկընա ի՝ դե՛ էլի էրթայնք, քանի շոտ ի:

Իրիկ, կնիկ, էրկուս մեյտեղ կինեն ճանապարհ, կէրթան քյաղայք: Մշակ-թագավուրու լաճ կնկան կտանի կդնի ուր կազերայ բոն, տուն: Հմեն իրիկուն մեյ խատ լավ կագ կմորթեն կուտեն: Կնիկը շատ կվախենա, կասի. - Վայ թե թագավորն իմնա, մե ըստեղեն էլ կխանի, խեղճ կէլնենք, էլ մարդ մե տիրութեն չանե:

Իրիկը ականջ չանե, զըմեն օր ուր արած կանի:

Մեկ օր թագավուրու տուն հայ կթխեն՝ թագավուրու լաճը մորը կասի. - Մարե՛, մշակու կնիկ բերեք որ գյոտնակ անի մե, էն շատ լավ գյոտնակ կանի, մեյ տեսեյք ինոր մարիֆաթն:

Ինքն էլմ կփոխվի, կուգյա կնկանն կասի. - Որ կէրթաս գյոտնակ կանես՝ քիչ մի խայ գյողցի բեր խետդ. կազի մըսի խետ կուտենք, թող մարդ չիմանա:

Կնիկն էլ, խայ-խմորիկ որ կպոցնեն՝ ինչխ կէլնի, քյանիմ խատ լսվ լոշեր կդնի վեր փորին, կկապի, որ տյուս էլնի, գյա: Մեկ էլ էն կտիսնա, որ թագավուրու լաճ, մշակու կըլըղ փոխե, ամր արե որ զուտնեն-նաղարեն կզանեն, պիտի որ խայթուխը և գյոտնակ արողը մեյտեղ խաղան:

Գյոտնակ արողն ի, որ կխաղա՝ փորի վիրվուց խայեր կմշրտրվեն կթափեն տակ: Տիսնող մարդեր մատներ կկծեն, կասեն. «Վայ, վայ, էսա ի՞նչ կանդար անոթի են, որ խայերն էլ գյողցեր են, կապեր են փորերայ վերեն»: Թագավուրու լաճը համան շոտ թե շոտ էլմ ուր շորեր կփոխի, կմտնի մշակու կըլըղ, կուգյա մոտ կնիկ, կասի. - Ի՞նչ արիր, ի՞նչ չարիր, ու՞ր է քյո բերած հայը, բեր ուտենք կազի մսի խետ:

- Քա ի՞նչ սև խաց. թագավուրու լաճ ձիկ արաց ծաղր-ծանակ ալամա-դեսթան. փյու էլ բա՞ն որ էր ուսուցիր ձիկ:

- Բան չկա, վաղն էլ խմորի գունդեր դիր ջոբդ, մեջն ալուր ցանի որ չկպչի. բեր, վեր սաջին կէվենք կուտենք:

Կնիկն էլ էն մեկել օր կէրթա, իրկան ասածին պես խմորի գունդեր կդնի ջոբ. կանի որ փյուս էլնի՝ սհաթին էլմ'էլ թագավուրու լաճ ամր կանի, զուռնեն-նադարեն կզանեն, որ հայթուխ ու գյոտնակ արողը մեյտեղ խաղան:

Ալյուր փստ-փստ ինոր ջոբից կուտա փյուս. կկարմրի կկարմրի, գյոն կուտա, գյոն կառնի, շատ էլ կամչնա աղջիկը. կքաշվի, կկծկվի մեյ կողմ, էլ չզիտե ի՞նչ անի ամոթութեն: Իրիկոն որ կէլնի՝ թագավուրու լաճ կխայնի մշակու շորերն, գուգյա մոտ կնիկ: Կասի ինոր. - Բեր զունդերը իփեյնք:

- Վա՛յ, ես խող մտնեմ, մոխիր մտնեմ. էսա ի՞նչ օյին ու խաղքութեն ի որ կխանես իմ գլխին. ձիկ ամչցուցիր:

- Բան չկա, քե դարտ մի՛ անե. բեր կազմ՝ էլ մորթենյք ուտենք, տիսնանք չյում աստվուած ինչ կուտա մեզ:

Մեկել օր թագավորու լաճը ուր մոր կասի. - Մարե՛, ես պիտի պսակվեմ, կուզեմ, որ քյո ամրովն էլնի պսակս:

Կէլնի կըլըցի մաղ մը նուռ, մաղ մը մարգրիտ, մաղ մը ոսկի, մաղմ էլ ակունք-ջավահիր, մաղմ էլ կրամոխիր, կդնի վեր մշակներաց գլխուն, կասի. - Տարեյք կան ածեք, իսոր հեքիաթն վով ասի՝ ես էն կառնեմ ձիկ կնիկ:

Մշակները դյոր որ կան կածուցեն՝ մարդ չիմնա ինոնց նշանակութեն. ետ կդառցուցեն, կբիրեն փուն. կասեն. - Թագավոր ապրած կենա, մարդ իսոր էութեն չիմցավ:

Ամր կանի, որ կանչեն մշակու կնկան էլ:

Մերը կասի. - Տղա՛, խո մշակու կնիկ չե՞ս առնե:

Լաճը կասի. - Մարե՛, շյուշտեմ, բալքի թե մշակու կնիկ գիտի, առնեմ թե չառնեմ՝ աստված գիտի, ինոր էլ կանչեյք:

Խըզմաքյարները կէրթան, կազի տնից մշակու կնկան զոռով-խաթրով կառնեն կբերեն ներս, մաղով նուռ, ոսկին. ակնունք, ջավահիր, կրամոխիրը կդնեն առաջն. կասեն. - Ասա իսոր խեքյաթ, թե չէ, մընկա ի, դորմ ի վիզդ կէրթա:

Մշակու կնկան սիրտը արուն կդառնա. աչքերը արտսունքով կլցվի միտ կինի ուր արածը առաջին դրուն, որ հանեց իրկան գլխին նոան խատի խամար:

- Այ կնիկ, ինչի՞ կուլաս, ասա, մի բան էլ փյու ասա:

- Ես ի՞նչ ասեմ, ասելն ասելուց անցե.

«Ես թանգ-մանգ ի քյանձ էսա մարգյրիտ,
Ես կըպըսպըղի քանձ էսա ջավահիր ակնունք.
Ձիկ ի՞նչ կխասներ, ո՛չ արև, ո՛չ լուսին, ոչ աստղունք:

Ա՜խ, խաւրեն, նոան խաւրեն.
Ձիկ արաց սախուն էրերուն.
Ձրրկվա էն փառք ու պատվիս,
Խառնվա խետ կրամոխիրներուն»:

Թագավուրու լաճու մերը որ կլսի՝ մունջ կանի. չխասկնա:

Լաճը կասի մոր: - Մարե՛, տեսա՞ր, լսեցի՞ր էսա կնկան զրույց, կառնեմ որ կլսոնեմ, էսա ի իմ ուզածը որ էսա ի:

Մշակու կնիկն էլ կծկվե, էլե պրտուճ մը բամբակ, կպե պատ, կասի. - Քա յա, էտա ի՞նչ խաբար ի, ախը ձիկ էլ տեր-տիրական կա, ես էլ մարդու տեր եմ, անտեր չեմ:

Թագավուրու լաճը էլ չի համբերե, առջև կէլնի ու կասի. - Իմ սիրական, ես եմ քո տեր ու տիրական. էլ մի վախենա, մարդ բան ասող չկա քեզ: Ես էն եմ, թագավուրու լաճ, որ մեկ նոան խատի խամար ինատ արիր, ճամխիս եր դարձար քյո խոր տուն. էսա քյանի տարի ի, որ ես քյո իտն կֆռամ, որ քյո խորվուրտութեն իմանամ, ըստուց դեն դու իմն ես, իմ:

Էն սհաթին թագավուրու լաճ ամր կանի, որ աղջկան տանեն բաղնիս, յոթն գյոն-գյոն սապոնով լվան ինոր ջան-ման, թագաս խալավները խասգյուցեն ու բերեն տուն: Ասածն ու էլած մեկ կլինի, շոտ կկատարվի:

Նոր խարսնիս, նոր ուրախութեն կանեն կպսակվեն: Ինոնյք կխասնեն իրենց սրտի մուրազին: Աստուած մեզի էլ խասուցի մեր սրտի մուրազին: